№ 59 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 18 1903 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 18 № 59

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ. օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն. Պաշտօնական հաղորդագրութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Օդեսայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ Բաֆֆիի կեանքից.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բոլգարական մինիստրութեան հրաժարական տալը ներկայ րոպէում աչքի ընկնող քաղաքական երեւոյթ է: Մինիստրութիւնը զգում էր իր մեծ պատասխանատուութիւնը բոլգար ժողովրդի և եւրոպական պետութիւնների առաջ և անկարող լինելով այնպիսի դիրք բռնել, որ միաժամանակ հաւանութիւն գտնէր թէ բոլգարական ազգաբնակութեան և թէ եւրոպական պետութիւնների առաջ, վճռեց հրաժարական տալ:

Արդարև բոլգար ժողովուրդը կասկածով է վերաբերվում դէպի այն խոստումները, որ արել է Թիւրքիայի կառավարութիւնը Մակեդոնիայի վերաբերութեամբ և չէ հաւատում, որ մակեդոնական ռէֆորմները իրագործութիւն ստանան և նպաստաւոր կերպով լուծեն այն ծանր և դժուար կնճիռները, որոնք տասնեակ տարիներով կաշկանդել են մակեդոնական ժողովրդի կանոնաւոր զարգացումը: Զը հաւատալով Թիւրքական խոստումներին, բոլգարական ժողովուրդը համակրութեամբ չէ վերաբերվում և այն քայլերին, որոնցով բոլգար կառավարութիւնը աշխատում է խեղդել Մակեդոնիայում կատարվող շարժումները և ուրեմն որոշ աստիճանով կարծես նպաստում է Թիւրքիայի նեղ նպատակներին: Բոլգարական մինիստրութեան դրութիւնը կրիտիքական էր: Նա չէր կարող անտես անել հասարակական կարծիքը, իսկ միւս կողմից պարտաւոր էր թոյլ չը տալ այնպիսի քայլեր, որոնք ապագայում Բոլգարիային պատասխանատու դարձնէին անախորժ բարդութիւնների և գուցէ մեծ կորուստների համար:

Մակեդոնական հարցի վերաբերութեամբ միատեսակ չեն Բոլգարիայի, Սերբիայի և Ցունաստանի բռնած դիրքերը: Այդ փոքրիկ պետութիւնները յոյս ունեն Մակեդոնիայի որոշ մասերը իրանց ձեռքը գցել և այդպիսով ընդարձակել իրանց տիրապետութիւնը Բալկանեան թերակղզու վրա: Սակայն նրանց մէջ համաձայնութիւն չէ կայանում ազդեցութեան շրջանների վերաբերութեամբ: Դեռ Բոլգարիայի և Սերբիայի մէջ մի որոշ մերձեցում գոյութիւն ունի, իսկ ինչ վերաբերում է Ցունաստանին, նա բոլորովին հակառակ լինելով բոլգարական տարրի ուժեղանալուն գաղափարին, չէ ուզում լսել ոչ մի համաձայնութեան մասին: Ցունաստանը ներկայումս չէ համակրում մակեդոնական շարժմանը, համարելով դրան բոլգարական ագիտացիայի մի արդիւնք, և մտադիր չէ ոչ մի բանով օգնել մակեդոնական շարժման ներկայ պարագլուխներին, եթէ վերջիններս նոյն իսկ կարող լինէին պատկառելի պատերազմական ոյժ ներկայացնել:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Кавказъ» լրագրում տպված են հետեւեալ կառավարչական հաղորդագրութիւնները. «Բաթում քաղաքում, մարտի 9-ին, առաւօտեան, բանւորների մի մեծ խումբ հաւաքվեց կայարանում գնացքի ուղեւորվելու ժամանակ, որպէս զի ճանապարհ դնէ դատաստանի ենթարկված բանւորներին պաշտպանող փաստաբաններին: Երբ գնացքը շարժվեց, ամբոխը, կարմիր դրօշակ պարզելով, «ուրայի» աղաղակներով սկսեց գնալ գնացքի ետեւից երկաթուղային գծի վրայով:

Դէբախտ դէպքերից խոյս տալու համար՝ մեքենավարը կանգնեցրեց գնացքը, որ ապա շարունակեց ճանապարհը մի քանի րոպէից յետոյ, երբ ամբոխը հեռացաւ գծի վրայից:

Կայարանից ամբոխը, պարզելով էլի մի քանի դրօշակներ հակակառավարչական մակագրութիւններով, սկսեց առաջ գնալ Մարիինսկի պրոսպէկտով, որտեղ մի քանի անգամ ատրճանակ արձակեց, առանց որ և է վնաս պատճառելու, և ջարդեց պատուհանի ապակիները «Черноморскій Вѣстникъ» լրագրի խմբագրութեան, պ. Էրնի և ամերիկական հիւպատոսի բնակարաններում:

Դրանից յետոյ՝ ամբոխը, տեսնելով մօտեցող զօրախումբը, ցրվեց:

—

Բաղու քաղաքում, այս մարտ ամսի 2-ին, կէսօրվայ ժամի 12-ին, Մարիինսկի պարտէզի մօտ սկսեց հաւաքվել ժողովրդի բազմութիւն, որը աղաղակներով ուղեւորվեց դէպի պարապետ՝ ճանապարհին մեծ քանակութեամբ հակակառավարչական բովանդակութիւն ունեցող պրոկլամացիաներ ցրվելով. նոյնպիսի պրոկլամացիաներ դուրս էին ձգվում մի քանի տների պատուհաններից: Ամբոխի մի մասը աջողվեց ցրվել ոստիկանութեան միջոցներով և կազակների օգնութեամբ, իսկ մի մասը հասաւ Մարիինսկի պարտէզին և միացաւ այնտեղ գտնվող ցուցարարների հետ: Այստեղ, բացի աղաղակներից և պրոկլամացիաներ ցրվելուց, ամբոխը քարեր էր նետում ոստիկանների և կազակների վրա, ապա, հալածվելով նրանցից, շարժվեց Մարիինսկի փողոցով դէպի Պետրովսկի հրապարակ: Մարիինսկի փողոցում ամբոխի մէջ մի բոպէ երևաց կարմիր դրօշակ:

Ամբոխի մի ուրիշ խումբ Կրասնովոդսկայա և Մերկուրեվսկայա փողոցների անկիւնից ուղեւորվեց դէպի Սօլդատսկի Բազարը: Սակայն այնտեղ գտնվող կազակների հարիւրեակի հրամանատարի ձեռք առած միջոցներով աջողվեց ցրվել այդ ամբոխը. այդ ժամանակ մի քանի անձինք ներս քշվեցին Ծովագնացների ուսումնարանի գաւիթը և այնտեղ ձերբակալվեցին: Ամբոխից ձգված մի քար թեթև կերպով վիրաւորեց կազակներից մէկի գլուխը: Բաղուի նահանգապետի բացակայութեան պատճառով նրա պաշտօնը վարող Բաղուի փոխ-նահանգապետ Լիլէեվ դիմեց դէպի ամբոխը և հանդիպելով նրա մի մասին Բարեատինսկայա փողոցում, առաջարկեց նրան ցրվել, որ և կատարվեց: Այդ ժամանակ Մարիինսկի փողոցի վրա երևաց մի այլ ամբոխ: Շտապելով նրա մօտ, փոխ-նահանգապետ Լիլէեվ լսեց գնդակաձգութեան երկու հարուածի ձայն, որ գալիս էր Պետրովսկի հրապարակի կողմից: Դուրս գալով կառքից, փոխ-նահանգապետը ուղեւորվեց յիշված հրապարակը և սկսեց համոզել ամբոխին, որ դադարեցնէ անկարգութիւնները: Այդ ժամանակ փոխ-նահանգապետ Լիլէեվ թեթև վէրքեր ստացաւ գլխին և ձեռքին:

Երբ բժիշկները մօտակայ մասնաւոր տներից մէկում կապեցին նրա վէրքերը, Լիլէեվը նորից շարունակեց պտտել կառքով քաղաքի մէջ և կարգադրութիւններ տալ անկարգութիւնները դադարեցնելու վերաբերմամբ:

Ժամի 2-ին կէսօրից յետոյ ամեն ինչ հանգստացաւ:

Նոյն օրը, ժամի 5-ին երեկոյեան, Բալախանիում, ամբոխը՝ բաղկացած մօտ 2000 մարդուց, հաւաքվեց Վօլչինսկի նաւթահանքի մօտ, սկսեց աղաղակել, աղմուկ բարձրացնել, բայց ոստիկանապետը համոզեց նրան ցրվել և երեկոյեան եօթներորդ ժամին ամեն ինչ հանգստացաւ:

Բաղու քաղաքում անկարգութիւնների ժամանակ ձերբակալվեցին 21 հոգի, որոնցից 18-ը փոխ-նահանգապետի կարգադրութեամբ, պետական պաշտպանութեան օրէնքների հիման վրա, ենթարկվեցին բանտարկութեան Բաղուի բանտում, իսկ երեքը, երկու դէպլիստ և Միքայէլեան քաղաքային ուսումնարանի մի աշակերտ, յանձնվեցին ուսումնարանական վարչութեան ձեռքը:

Ձերբակալված անձերի ցուցակը հետեւեալն է:

Երեք ամսով

1) Շուշի քաղաքի բնակիչ Բագրատ Գալուստով Աւագեանց:

2) Աստրախան քաղաքի մեչանին Վասիլի Դմիտրիեվ Դրօբիշեվ:

3) Շամախի քաղաքի բնակից Արտէմ Բախիշեվիչ Դադաեվ:

4) Պարսկահպատակ, Թաւրիզ քաղաքի բնակիչ Աւետիս Գաբրիէլովիչ Գաբրիէլով:

5) Գէօկչայի գաւառի Շոռլ գիւղի բնակիչ Բաղլամ Բախիշեվիչ Բագրիեանց:

6) Տվերի նահանգի, Նովոտորժոկի գաւառի, Տորժոկ քաղաքի բնակիչ Իլիա Էֆիմով Նովոսելցեվ:

7) Տամբովի նահանգի, Ելատոմսկի գաւառի, Խոխլովկի վոլոստի, Պենկի գիւղի բնակիչ Ստեպան Դենիսով Սիդորով:

8) Կոլչիժսկի ասսէսորի որդի Ներսէս Նիկիտիչ Նաւասարդեանց:

Երկու ամսով

9) Զանգեզուրի գաւառի բնակիչ Սերգէյ Բաղդասարովիչ Աարիեվ:

10) Նախիջեւանի գաւառի բնակիչ Ալէքսանդր Սարդարովիչ Հայրապետեանց:

11) Խերսոնի նահանգի բնակիչ Մոյսէյ Մաքսիմովիչ Մալչենկո:

12) Մոգիլեվի նահանգի բնակիչ Շավէլ Շայֆ Կունիկ:

13) Վիտէբսկի նահանգի բնակիչ Խայիմ Մորդկով Կոգան:

14) Ալէքսանդրոպոլ քաղաքի բնակիչ Իլիա Սեմեոնով Ֆատիեվ:

Մի ամսով

15) Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գաւառի բնակիչ Օհանէս Մկրտչեան Զարուխով:

16) Պարսկահպատակ Աթանէս Կարապետովիչ Մկրտչեանց:

17) Շուշու բնակիչ Արմենակ Արկադեվ Տէր-Սարգիսով:

18) Զանգեզուրի գաւառի Գեորգիս գիւղի բնակիչ Դաւիթ Առաքելովիչ Խուրշուդեանց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Յայտնի է, որ Խաչիկ վարդապետ Դատեանը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՐԱՖՖԻԻ ԿԵԱՆՔԻՑ

(Շարունակութիւն)

Մութն էր արդէն, երբ մենք մեր զբօսանքը վերջացնելով եկանք մտանք Ալի աղայի վրանը: Մեր ամեն մէկիս ձեռքում կային մի մի հրացան և մի քանի հատ սպանված թռչուններ: Ալի աղան այդ նկատելով՝ մեզ ուղղեց հետեւեալ խօսքերը:

—Հայի հրացանը միայն թռչուններ կարող է սպանել, աւելի ոչինչ: Լաւ չէր լինի, որ ձեր այդ հրացանները բարձր գնով վաճառէիք ինձ. գեղեցիկ են, հիանալի: Հայը ֆլայ է (այսինքն մշակ դասից), վրա բերեց ցեղապետը մի կեղծ ժպիտով. նա իսկապէս չը գիտէ, թէ հրացանը ինչի համար է հնարված:

Բաֆֆին, ցնցված այդ խօսքերից, այսպէս պատասխանեց:

—Հայը աւելի արժանաւոր կերպով է գործածում իր զէնքը, քան թէ քիւրդը: Հայը իր անունը և իր հրացանը չէ կեղտոտում կողոպուտի և անարդար մարդասպանութեան համար: Հայը այն ժամանակ է զէնքի դիմում, իշխան, երբ տեսնում է, որ իր կեանքին սպառնում են և կամ գործադրում է նրան զուարճանալու համար: Իսկ քիւրդը, հակառակ իր քաջ անուան, վազուց արդէն իր զէնքի վրա թողել է անարդար արեան բծեր, որ սակայն ցաւալի է: Այս խօսքերից գուցէ դուք վիրաւորվէք, իշխան, բայց դուք և ձեր ցեղը բացառութիւն էք կազմում. այս իմ նկատողութիւնները այլ և այլ քրդական ցեղերի մասին են, և այս՝ փաստերով կարող եմ հաստատել:

Ալի աղան, որ լուռ լսում էր, կարծես զըղջալով իր ասածների վրա՝ այս պատասխանեց.

—Ձեր ասածները հեռու չեն ճշմարտութիւնից. ամարդի դէպքեր շատ են պատահել մերայինների ձեռքով, բայց դրանք ընդհանուր չեն. քուրդ էլ կայ, քուրդ էլ կայ: Բայց, ասացէք խնդրեմ, դուք որտեղ էք սովորել հրացան արձակելը: Հայ վաճառական դասը մեր կողմերում ծանօթ չէ բնաւ զէնք գործածելու հետ. որդիքս ինձ պատմեցին, որ դուք երեքդ էլ բաւական աջողակ կերպով հրացան էք արձակում:

Բաֆֆին պատասխանեց:

—Ես չը գիտեմ իսկապէս, թէ իմ ընկերները ինչ առիթներով էն ծանօթացել հրացանի հետ, իսկ իմ մասին, ես այս կասեմ, որ մանկութիւնից մի առանձին սէր ունէի հրացանի վրա: Երբ ես 8 տարեկան էի, մի երկար ճիպոտ ունէի ձեռքիս, նրա մի ծայրը դանակով տաշելով տափակացրեցի, մի մատնաչափ տեղը ծայրում բարձր թողնելով, որպէս յենարան, յետոյ խսիրից կէս մատնաչափ լայն և մի թիզ երկար տաշեղը կամարի նման կռացնելով՝ նրա մի ծայրը թելով կապում էի ճիպոտի տաշած տեղի մի կողմին, իսկ միւս ծայրը կպցնում էի յենարանին, որտեղ էլ պնդացնում էի խսիրից տաշած մի սլաք գրչածայրի մեծութեամբ: Երբ մատներովս դիպչում էի կռացած խսիրի կամարին, սլաքը դուրս թռչելով դիպչում էր ճանճին կամ մրջիւնին. այս եղանակով հազարաւոր ճանճեր և մրջիւններ սպանեցի: Յետոյ նկատելով, որ հասակաւոր մարդիկ հրացան արձակելով թռչուններ են վայր գցում, բայց որ հրացանը ինձ համար անմատչելի է, ինձանում մի այլ միտք ծագեց: Ես ձեռք բերեցի երկու արշին երկարութեամբ մի եղէգ, որի մէջը դատարկ էր. նա ինձ ծառայում էր որպէս հրացանի փող, իսկ գնդակների տեղ գործ էի ածում սիսեռներ կամ կաւից շինած փոքրիկ կլոր գնդակներ, որ արևումը չորացնելուց յետոյ, նրանցից մի քանիսը բերանս էի գնում և փողի քը պատրաստեն: Այս պատուէրը լսելուն պէս, մի ծայրն էլ դիպցնում էի բերանիս և փչելով գնդակները փողի միջանցքով հասցնում էի ուղղած նպատակիս: Այդ եղանակով էլ բաւական փոքրիկ թռչուններ որսացի, որոնք փոքրիկ գնդակների հարուածից թէև չէին մեռնում, բայց չփոթված վայր էին ընկնում, իսկ ես վրա հասնելով բռնում էի նրանց: Բայց երբ ես բաւական մեծացել էի, հրացան արձակելու սէրն էլ աւելի էր մեծացել ինձանում, ես փոքր առ փոքր ծանօթացայ իսկական հրացանի հետ, մանաւանդ Կովկասի և այլ տեղերի ճանապարհորդութիւններն էլ ինձ այդ բանի մէջ նպաստեցին և այսօր, ինչպէս տեսնում էք, բաւական վարժված եմ:

—Ճիշտ է, ասաց Ալի աղան,—Կովկասում դուք աւելի ծանօթացած կը լինէք հրացանի հետ. ես լսել եմ, որ հայ ազգը բաւական մեծ թւով քաջ հեծեալներ, ասպիճանաւորներ և զօրապետներ ունի կայսերական բանակի մէջ, և հեռզհետէ աւելանալու վրա են: Ռուս ազգը՝ մեծ ազգ է և մեծ կայսրութիւն, մենք միայն այդ կայսրութիւնից ենք վախենում և ակնածում:

Գլուխ VII

Արդէն գիշեր էր. քիւրդերը շատ վաղ են ընթրում: Ալի աղան պատուիրեց, որ ընթրիքը պատրաստեն: Այս պատուէրը լսելուն պէս,

էջմիածնում պեղումներ կատարելով, բաց արաւ Զուարթնոց եկեղեցու աւերակները։ Դա մի շատ լաւ գործ էր, բայց և մի այնպիսի գործ, որ գեղեցիկ կերպով բնորոշում էր էջմիածնի տխուր, շատ տխուր իրականութիւնը։ Երևակայեցէք։ Ամենայն հայոց Մայր-Աթոռի քթի տակ գոյութիւն ունի մի հին աւերակ։ Վանքը ունի հարիւրաւոր ծառայողներ, ունի հարիւր հազարներից բաղկացած եկամուտներ։ Ոչ ոք չէ հետաքրքրվում, ոչ ոք մատը մատին չէ խփում այդ աւերակները բաց անելու համար։ Ի՞նչն էր պակաս. մարդիք թէ փող։ Ոչ այս, ոչ այն։ Պակասում էր եռանդ, հետաքրքրութիւն։ Եւ ահա էջմիածնի մէջ գտնվում է մի վարդապետ, որ մենակ, ինքնագլուխ ձեռք է առնում այդ գործը։ Նա ստանում է Պետերբուրգի հնագիտական յանձնաժողովից պեղումներ կատարելու թոյլտուութիւն, սկսում է գործը իբրև մասնաւոր անհատ, իր սեփական միջոցներով։ Վանքի վարչութիւնը միայն հեռուից նայում է այդ վարդապետին։ Գործը գլուխ է գալիս. հողի տակից մի ամբողջ հին եկեղեցի է հանված։ Խաչիկ վարդապետը պիտի դէն դնէր բահն ու բրիչը և ասէր, որ իր գործը վերջացած է, այսուհետև թող հմուտ հնագէտները վճռեն թէ ինչ աւերակներ են սրանք։ Բայց նա այդպէս չարաւ. պեղումներ կատարողի միանգամայն պատուաբեր դերը բաւական չէր, նա կամեցաւ հնագիտական բարդ հանդամանքներ և պատմական փաստեր բացատրող գիտնականի դերն էլ յանձն առնել։ Մոռացվեց ձեռնհասութեան և պատրաստութեան հակացողութիւնը, առաջ մղվեց թեթևամտութիւնը։ Էջմիածինը շարունակում էր լուռ ու անտարբեր մնալ. նա գոհ էր, որ Զուարթնոց եկեղեցին կոպէկ չէ հանում իր գանձարանից, բայց մի և նոյն ժամանակ հաճելի կերպով չոյում է ինքնասիրութիւնը. չէ որ այդ նշանաւոր գիւտը պատիւ էր բերում միաբանութեան։ Լաւ էր և անփոյթ։ Էջմիածինը պիտի լինէր այդպիսի բան չընդունողը։ Եւ ահա ինչ տեսանք մենք։ Զուարթնոց եկեղեցին դեռ վերջնականապէս չէր մաքրվել հնութեան փոշիներից, երբ դարձաւ մեծ ուխտատեղի։ Ցայտաբղխեց բերանացի կերպով թէ եկեղեցու մէջ գտնվել են Գրիգոր Լուսաւորչի մասունքները։ Ժողովուրդը վազեց ուխտի, մատաղներ էր մորթում։ Նոյն լուութիւնը վանական կառավարութեան կողմից։ «Արարատում» մի բան չը տպվեց այդ մասին։ Աւելորդ համարեցին ասել, թէ ճիշդ է այդ գիւտը. աւելորդ համարեցին յայտարարել, թէ ում ներկայութեամբ են բացվել մասունքները։ Կրօնական խոշոր հարց էր, չէ՞։ Էջմիածինը այդպիսի հարց չունէր։ Զուարթնոց եկեղեցին Խաչիկ վարդապետի մասնաւոր սեփականութիւնն էր դարձել, իսկ սեփականատէրը ասում էր, թէ իր գտածը ճիշդ և ճիշդ Գրիգոր Լուսաւորչի ոսկորներն են։ Էջմիածինը իր խորին լռութեամբ կարծես միայն հաստատում էր այդ բանը։ Ժամանակին մենք բողոքեցինք այդ իսկ տողերում. ասացինք թէ չը պէտք է շահագործել ժողովրդի կրօնական զգացմունքները։ Ուշադրութիւն չը դարձրին. «Մշակի» ասածներին հակառակը անելը էջմիածնի վարիչների համար քաջագործութեան նշան է։ «Արարատը» այդ ժամանակ զբաղված էր ատուածաբաններ փառաբանութեամբ. նա ամենայն ուշադրութեամբ արձանագրում էր աստուածաբանների կենսագրական տեղեկութիւնները, բայց այսպիսի մի կարևոր հարցի մասին և ոչ մի տող։ Միայն վերջերումս «Արարատը» սթափվեց և տպագրեց Ցուսիկ եպիսկոպոսի մի յօդուածը, որ ապացուցանում էր, թէ Զուարթնոց եկեղեցին հին, նախնական էջմիածինը չէ և այնտեղ Գրիգոր Լուսաւորչի մասունքներ չը կան։ Բայց արդէն ուշ էր։ Ռուսաց լրագիրների և ամսագրերի մէջ արդէն ապացուցված էր համարվում այն, ինչ ասել էր Խաչիկ վարդապետը իր աւերակների մասին։ Եւ այժմ էլ ռուս լրագիրները չեն հաւատում, թէ կարելի է ունենալ մի այլ կարծիք։ Ահա ինչ ենք կարդում «Новое Время» լրագրի մի թղթակցութեան մէջ.

Անցեալ հոկտեմբերին Վրաստանի բարձր սրբազան էկզարխոս, արքեպիսկոպոս Ալէքսի այցելեց պեղումների տեղը, օրհնեց հ. Խաչիկի աշխատանքները, որ աշխատում է ի փառս տիեզերական նախնական քրիստոնէութեան։ Այն ժամանակ էլ ամենայն հայոց Կաթողիկոսի մօտ, Էջմիածնում, ճաչելիս Վրաստանի էկզարխոսը հրապարակով խնդրեց բոլոր քրիստոնեաների կողմից տօնվող Գրիգոր Լուսաւորչի մասունքների մի մասնիկը՝ Երևանում կառուցվող օրթոդոքս մայր եկեղեցու համար և Կաթողիկոսը, քիչ մտածելուց յետոյ, այնտեղ էլ հրապարակով խոստացաւ տալ։ Գիտութեան խեղճ աշխատաւոր հ. Խաչիկը չէր կասկածում, թէ ինչ հետևանք կունենայ այդ խոստումը։ Իրաւ, եթէ խոստումը կատարվէր—դա ահագին տրպաւորութիւն կը թողնէր հաւարակ ժողովրդի վրա, կը յիշեցնէր նրան թէ սկզբում միայն մի քրիստոնէութիւն է եղել, թէ յետոյ միայն բաժանվեց եկեղեցիների, թէ ուղղափառները և հայերը ունեն ընդհանուր սուրբեր և սա կարող էր նպաստել հայերի մերձեցման ուղղափառութեան հետ, մերձեցման մի միակ տիեզերական քրիստոնէութեան։ Բայց այսպիսի մի բան կարող են թոյլ տալ քրիստոնեաների բաժանման ներկայ նեղ կողմնակիցները։ Երեք տարի պեղումները առաջ էին գնում այն կատարեալ հաւատով, թէ բացվում են Գրիգոր Լուսաւորչի հողը և աշխատութիւնները, ինչպէս այդ մասին վկայում են իրանք հայ պատմագիրները։ Եւ ահա այժմ յանկարծ 7 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ և 20 վարդապետներ կազմում են բողոք և ներկայացնում են Կաթողիկոսին, վէճի ենթարկելով, հակառակ հէնց իրանց պատմագիրների, թէ պեղումներով բացված հնութիւնները նախնական Վաղարշապատն են, ուր ի միջի այլոց 491 թիւն տեղի է ունեցել չորրորդ տիեզերական ժողովը (?),—և հաստատելով, որ հին Վաղարշապատը և այժմեանը մի և նոյն են, թէև այս բանին հակասում են քրիստոնէութեան առաջին դարերի պատմագիրների ցուցմունքները։ Միայն շարունակելով պեղումները, որոնց պէտք է օգնէր հնագիտական յանձնաժողովը, կարելի կը լինի ցոյց տալ թէ ճշմարտութիւնը ում կողմն է, իսկ իր ճշմարտութեանը հ. Խաչիկը հաւատում է ջերմ կերպով։

ՆԱՄԱԿ ՕԴԵՍԱՑԻՑ

—

Մարտի 6-ին

Առհասարակ հայկական ներկայացումները, գրական և երաժշտական երեկոյթները հազւադիւտ երևոյթներ են մեզանում։ Մեր, այս հայութիւնից միանգամայն խորթացած բաւական ստուար հայ կոլոնիայում աւելի՝ քան մի այլ տեղ կարևոր էին այդ բոլորը։ Տեղացի հայը չը գիտէ ինչ է հայութիւն, ինչու՞ են իրան հայ համարում, չը գիտէ իր ծագումը, չը գիտէ իր լեզուն...

Զարմանալի թող չը համարէ ընթերցողը հետևեալը. մի ինտելիգէնտ հայ օրիորդ մի անգամ հարցնում է. «հայերը դրոշներ ունեցել են երբ և իցէ կամ ներկայումս կան գրոշներ»։ Օրիորդը զարմանում է, օրինակ, որ հայ վիպասան կարող է լինել. զարմանում է, որ մենք ունեցել ենք Աբովեան, Բաֆֆի, Նալբանդեան, Պատկանեան, ունենք Լէօ, Ահարոնեան և այլն և առաջին անգամ է լսում նրանց մասին. զարմանում է, որ մէկը նրան ասել է, թէ կովկասեան մամուլը ընդհանրապէս և հայերին՝ մասնաւորապէս, աւելի գաղափարական են և աւելի վեհ կոչում ունեն և աւելի բարձրերին՝ կանգնած՝ քան, օրինակ, Օդեսայի ռուսաց «յայտարարութիւնների» ժողովածուները... Օրիորդը չէ հասկանում, թէ ինչու՞ և ինչով են նրան հայ համարում. մինթէ՞ նրա համար, որ նրա պապերը հայ են եղել... բայց չէ՞ որ նա հայութեան մասին գաղափար անգամ չունի. չէ՞ որ նրան ծանօթ չէ հայի թէ անցեալը, թէ ներկան. չէ՞ որ, վերջապէս նա հայ լեզու չը գիտէ...

Ահա այսպիսի պայմաններում ամենքի համար պարզ կը լինի հայերէն ներկայացումների, գրական և երաժշտական երեկոյթների կարևորութիւնը և նրանց դերը։

Երէկ տեղական «Նոր» կոչված թատրոնում կայացաւ հայկական գրական-երաժշտական երեկոյթ, ուսանողների կազմակերպութեամբ։ Գովում ենք ուսանողների նախաձեռնութիւնը և մաղթում, որ ապագայում աւելի և աւելի եռանդուն լինեն. բաւական է անտարբեր վերաբերմունքը. ժամանակ է սթափվելու վերջապէս։ Առ այժմ նրանց արածները սաստիկ անկանոն են և կրում են անփորձութեան հետքեր, որ ամեն մի նոր գործի անխուսափելի հետևանքն է։ Երէկվայ երեկոյթը կայացաւ ի յիշատակ Վարդանանց տօնի, որ պէտք է տեղի ունենար անցեալ բարեկենդանին, բայց անյայտ պատճառներով կայանում է այս մեծ պասի երրորդ շաբաթին։ Լաւ է, ուշ, քան երբէք։

Առհասարակ երեկոյթը անցաւ միջակ կերպով, ոչ այնքան էլ գոհացուցիչ։ Խորհուրդ ենք տալիս «200,000»-ի պէս անմիտ և անբովանդակ վոդվիլների փոխարէն դնել աւելի օգտակար պիէսներ, մանաւանդ որ այդ պիէսը մի քանի անգամ արդէն առիթ է ունեցել տեսնելու հասարակութիւնը։ Ի՞նչ օգուտ կարող էր բերել վերնայարկում հաւաքված 50-ից աւել բանւորների համար «200,000»-ը, հարցնում ենք կազմակերպողներին։ Աչքի առաջ ունենալով սիրողների բարեխիղճ վերաբերմունքը, մենք հաւատացած ենք, որ նրանք նոյնպիսի աջողութեամբ կը խաղային աւելի հետաքրքրակուն պիէսներ։ Օրինակ, ուսանող պ. Ալլահվերդեան փորձված դերասանի տպաւորութիւն էր թողնում և մինչև վերջը խաղաց կատարեալ աջողութեամբ, մեծ զուարճութիւն պատճառելով ներկայ եղողներին։ Վատ չէր և օր. Մամուլեան։ Շատ տիպիկական էր պ. Վարդանեան Գալոյի դերում և մինչև վերջը խաղաց կատարեալ աջողութեամբ, որով մեծ զուարճութիւն պատճառեց հանդիսականներին։ Վերոյիշեալ երեք սիրողները մի մշտական խմբի հաստատուն հիմքը կարող էին կազմել։ Իսկ Մատեոսի Ակօպի դերը խաղացող պարոնը փչացնում էր միւսների թողած լաւ տպաւորութիւնը։

Ներկայացումից յետոյ սկսվեցին գրական տեսութիւնները, ճառերը, երգերը և ոտանաւորների ընթերցումը, որոնք շատ երկար էին և ընտրութիւնը մասամբ անաջող. եթէ ծրագիրը իսկութեամբ կատարվէր, դժուար թէ ժամը երեքին նոյն իսկ վերջանար երեկոյթը։ Խումբը այս անգամ կազմված էր հայերից և տպաւորութիւնը վատ չէր. խստապահանջ լինել չէ կարելի, որովհետև մենք չենք փայլում լաւ ձայներով. գոհ ենք և այդքանով, որովհետև գոնէ լսում ենք հայերէն կանոնաւոր արտասանութիւն։ Մի այլ օգտակար կողմ էլ ունի խումբը հայերից կազմելը. այդ այն է, որ տեղական օտարախօս օրիորդները և երիտասարդները սովորում են ազգային երգեր, որի համար ստիպված են հայերէն բառեր անդիր անել։ Եթէ խումբը աջողութեամբ չերգեց, այդ պէտք է վերագրել անփորձ և օտար խմբապետին, որի ձեռքերի անմիտ և անտեղի շարժումները միայն ծիծաղ էին յարուցանում։ Կարելի է լաւ խումբ կազմել և առանց մեծ ձայների. այդ հաստատում են տեղացիները՝ յիշեցնելով հանգուցեալ Կարա-Մուրզայի մի շաբաթում պատրաստած անմոռանալի համերգը։

Երաժշտական մասում սիրողների մէջ դարձեալ փայլում էր ուսանող պ. Ալլահվերդեան, որ ջութակի վրա նուագում էր մեծ զգացմունքով։ Ուսանող պ. Պոչեան անկեղծ և բուռն ոգևորութեամբ ու հիանալի առոգանութեամբ արտասանեց Պատկանեանի «Աղջիկը» և «Ցնորքներ» ոտանաւորները։ Պ. Վարդանեան կարդաց ճառ «Վարդանանց» մասին, որ կազմված էր երկու մասից. առաջին մասը «Վարդանանց պատերազմը»՝ առնված պատմութիւնից՝ աջող էր. իսկ երկրորդ մասը—եզրակացութիւնը, կամ անցեալի և ներկայի համեմատութիւնը, միանգամայն աւելորդ ու վայր ի վերոյ դատողութիւններ և փիլիսոփայութիւններ...

Սաստիկ անաջող էր և «Պատկանեանը և իր ոտանաւորները»։ Գրական տեսութիւնը ոչինչ տպաւորութիւն չը թողեց։

Վերջում մօգական լապտերի միջոցով ցոյց տրվեցին մեր «անցեալ պարծանքների նկարները՝ Վարդան, Բաֆֆի, Աբովեան, Նալբանդեան, Ալիշան, Պատկանեան և այլն։ Հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով դիմաւորեց Արծրունու և Խրիմեան Հայրիկի նկարները։

Երեկոյթը զուտ ընտանեկան բնաւորութիւն էր կրում, որովհետև լոկ հայերի համար էր. վերնայարկը ամբողջապէս բռնած էին բանւոր-գաղթականները, որոնք ըստ երևոյթին այնքան էլ գոհ չէին։ Երեկոյթ կազմակերպողները մոռացել էին, որ բանւորը նաւահանգիստ է գնում մէջքը կոտրելու համար առաւօտեան ժամը 6-ին, այն ինչ ժամը 1-ին միայն վերջացաւ երեկոյթը, որովհետև նա սկսվեց ուղիղ 9 ժամ 15 րոպէին։ Տեղական մի քանի արիստոկրատների ուշանալուն նշանակութիւն չը պէտք է տալ, որովհետև մի քանիսները եկան միայն ժամը 11-ին, յոյս ունենալով, երևի, որ երեկոյթը արդէն վերջացած և... պարերը սկսված կը լինեն...

մի կողմից քիւրդ բէգերը ներս մտնելով, եկան իրանց որոշ տեղերումնստեցին, իսկ միւս կողմից էլ սպասաւորները, մինը միւսի ետևից ներս բերեցին պարսկական կլոր պղնձէ սինիների (մատուցարան) մէջ դասաւորած ընթրիքը։ Ալին 2 կամ 3 հիւրի առաջ դրեց մի մի սինի և մի խոր ամանով թան, մէջը դրած մի խոշոր փայտէ ջերեփ։ Ընթրիքը պարունակում էր, բացի սովորական կաթնեղէնից, և զանազան թռչուններից պատրաստած կերակուրներ։ Ի պատիւ հիւրերի պատրաստված էր և մի մեծ գառը, ամբողջապէս խորոված մի առանձին սինիի մէջ։ Սպասաւորներից մէկը, նստելով այդ սինիի մօտ, խորոված գառը մի բօպէում իր ձեռքերով պատառոտեց և դնելով գառան պատառները թեփշիների մէջ, բաժանեց սեղանակիցներին։ Քիւրդերը, ինչպէս և բոլոր մահմեդական ազգերը, ճաշի և ընթրիքի միջոցին ոգելից որ և է բմպելիք չեն գործածում և չեն էլ խօսում։ Ամեն մարդ լուռ և գլուխը թեքած իր սինիի վրա՝ ձեռքով ուտում էր և ջերեփով թան խմում, մինչև որ ցեղապետ աղան գլուխը վեր բարձրացնելով, ուղղվեց։ Դա մի նշան էր, որ ընթրիքը վերջացած է, որից յետոյ ամենքն էլ իսկոյն ուղղվեցան։ Ծառաները ձեռք լուալու ջուր բերեցին, յետոյ սուրճ մատուցին, իսկ յետոյ ամեն մի հիւրին տրվեց մի մի երկար չիբուխ ծխելու համար։ Այնուհետև Ալի աղան մի կարճ խօսակցութիւնից յետոյ, սպասաւորներից մէկին հրամայեց, որ նուագածուների խումբը ներս թողնեն, որ դան ու հիւրերի համար մի քիչ նուագեն ու երգեն։

Նահապետական օրկէստրի խումբը ներս մտաւ, բաղկացած չորս քրդերից։ Մէկի ձեռքում կար մի փոքրիկ թմբուկ, երկրորդի ձեռքում մի սրինգ, երրորդի ձեռքում մի ջութակ, իսկ չորրորդը մի կոյր երգիչ էր, որ իր հետ բերում էր մի թառ։ Նրանք շարքով նստեցին մեզ հանդէպ։ Նրանց նուագարանները իրանց հնութեամբ և պարզ արուեստով հետաքրքիր էին։ Քրդերը ինչպէս իրանց հագուստի, լեզուի, զէնքի և նիստ ու կացի առանձնայատկութիւնները չեն փոփոխել, այնպէս էլ պահպանել են իրանց ազգային հնաւուրց նուագարանների ձևը և հին երգիչների հանգն ու եղանակը։ Ջութակը, քիչ նմանում էր պարսկական քամանչային, բայց նրանից քիչ բարձր էր և նիհար կազմուածք ունէր։ Նրա լարերը հիւսված էին ոչխարի աղիքներից։ Թմբուկը անարուեստ էր, սրինգը շինված էր եղեգնից, իսկ թառը գրեթէ պարսկականն էր։ Նախ ջութակահարն սկսեց մի մելամաղձոտ ներդաշնակութեամբ վին, վին, վին, վու, վու, յետոյ երեքը միասին, իսկ քիչ յետոյ կոյր երգիչը սկսեց ոգևորված երգել մի քրդական դիւցազներգութիւն խիստ ախորժելի ձայնով։ Երբեմն էլ նա իր ձեռքն էր առնում թառը, որն ածում էր լի հմտութեամբ։

Բնութիւնը թէև կոյր երգչին զրկել էր աչքերից, բայց օժտել էր նրան մի աքանչելի ձայնով, ընդունակ լսելիքով, տալով և նրա մատներին մի զարմանալի դիւրաթեք կարողութիւն։ Կոյրը ի՞նչ կոյր ծնված էր, բայց նա իւրացրել էր իր մէջ թէ երգելու և թէ ածելու երաժշտական ընդունակութիւնները։ Մենք երկիւղած լռութեամբ և կախարդված լսում էինք դիւցազնական հին լեգէնդան, որը վերցրած էր քրդական հերոսական կեանքից։ Երգչի աքանչելի ձայնը, նրա հանգերի պարզ հնչիւնները, նուագարանների ներդաշնակութիւնը, սիրուն գարնան հովիկը, գետի կարկաչահոս ընթացքի անուշ ձայնը, այն էլ վրանի տակ մի ձորակում, մի խօսքով դաշտային վրանաբնակ կեանքը մեզ այնպէս էր հմայել, որ մարդ կարծում էր, թէ գտնվում է մի գիշերային մոգական տեսարանի մէջ։

Երգիչը և նուագածուները յոգնելով դադար արին, որ նորից սկսեն։ Մենք էլ խզելով մեր լռութիւնը, սկսեցինք խօսել և ըստ սովորութեան գովաբանել թէ երգչին և թէ նուագածուներին։ Առիթից օգուտ քաղելով, ես Բաֆֆին ասացի, թէ այս դաշտային հանդէսը միաքս բերեց պատմական Որփէոսը և նրա մուզաները, որոնք միասին հանդէս կազմելով, իրանց քնարով և դիւցազնական երգերով հմայում էին իրանց ունկնդիրներին։

—Բայց եթէ լաւ ուշադրութեան առնենք, պատասխանեց Բաֆֆին, այդ քրդական ջութակը պէտք է լինի մեր բամբիռը, որ մեր անմահ Խորենացին յիշատակում է, իսկ երգիչը նոյնն է, ինչ որ եղել են Գողթան երգիչները։ Տեսնում էք, աւելացրեց նա, այս լեռնային բնակիչները ինչպէս անխախտ պահել են իրանց ազգային բոլոր սովորութիւնները։ Պատճառն այն է, որ նրանք, ազատ ապրելով լեռներում գրեթէ ինքնագլուխ, չեն ենթարկվել բռնաբարական ուժերի, դրա համար էլ նրանք խրոխտ են, յարձակողական և տիրապետելու ախորժակով լցված։ Այն ինչ տափարակ երկրում բնակվողները՝ պաշտպանողական միջոցներ չունենալով, չփվելով զօրեղ ազգերի հետ, իրանց ազգային սովորութիւնները կորցնելով ընդունել են հեռահետ ուրիշինը։

(Կը շարունակվի)

ժամը 1-ից անց հնչեց «միայն պարերի համար» հրաւիրված օրկէստրը և սկսվեցին եւրոպական պարերը, այդ, հայկական ամեն մի երեկոյթի, լինի նա նոյն իսկ գրական՝ անխուսափելի պոչը...

Ար—Թոն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կաղզուան, մարտի 11-ին

Տեղիս եկեղեցու շինութեան տխրահռչակ բարերար Զ. Զանտիօլաղեան մի նամակ է տրպել Թիֆլիսի մի լրագրում, իբրև հերքում ոչ միայն իր հերոսութիւնների մասին զանազան միջոցներում գրվածների, այլ և ներկայ թիւին «Մշակի» 18 համարում Կաղզուանից տպված լուրի, որ ամբողջապէս հիմնված է պաշտօնական գրութիւնների վրա։ Ուստի ստիպված եմ կարճ հոդևոր կառավարութեան ինձ ուղարկած պաշտօնական № 55 գրութեան բովանդակութիւնը լոյս հանել։

«Ի հոգևոր կառավարութեանս լուան զառաջադրութիւն բարձրապատիւ Տ. Փոխանորդի վիճակիս ի 11-ն ամսոյս № 10, յորում գրի՝ «Որովհետև պ. Զաքար Զանտիոլաղեան գրութեամբ իւրով ի 14-ն դեկտեմբեր անցելոյ 1902 ամի հրաժարեալ է շարունակել զշինութիւն եկեղեցւոյն հայոց Կաղզուան ուանի, և որովհետև շարունակութիւն շինութեան եկեղեցւոյն ըստ սրբատաւ կոնդակի նորին Ս. Օծութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ի 28-ն մարտի անցելոյ 1902 ամի թ. 460, ունի առնել բարեպաշտ ժողովուրդ տեղւոյն, ուստի նախ քան զնալն մեր անդ ի Կաղզուան և անօրինեալն զկարևորն, անհրաժեշտ համարիմք յանձնարարել զմին, անօրինեալն, զի երէցփոխան ս. Աստուածածին եկեղեցւոյ Կաղզուանի, նախ քան ցվերջ ամսեանս յայտնեսցէ թէ եկեղեցին ցորչափ դրամս ունի և առ ոմ զտանի, և երկրորդ՝ ցվերջ փետրուարի տարւոյս ի մի գումարիցէ զամենայն դրամս եկեղեցւոյն, զի այնու հնար իցէ ընտրելի հոգաբարձութեան շինութեան եկեղեցւոյն սկսանել և աւարտ հասուցանել զգործ շինութեանն ցվերջ օգոստոսի տարւոյս»։

Սրանով հրաւիրում ենք մեր բարձր հոգևոր իշխանութեան բարի ուշադրութիւնը մեր եկեղեցու շինութեան բարերարի վրա, որպէս զի նա լաւ ճանաչէ նրան, այլ ևս չը հաւատայ ու շինութեան գործը չը յետաձգէ... բաւական է, որքան խաղալիք դարձաւ մի ամբողջ հասարակութիւն մի մարդու ձեռքում...

Մ. Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ ուսանողներին օգնող ընկերութեան ընդհանուր ժողովը բեկանեց այդ ընկերութեան վարչութեան որոշումը իշխան Ճավճավաձէի յայտնի գրքի թարգմանութեան վաճառումից գոյացած գումարի գործադրութեան մասին և որոշեց այդ հարցի վճիռը թողնել ընդհանուր ժողովին։ Վարչութեան նախագահ բժշկապետ Ս. Անանեան, գտնելով ընդհանուր ժողովի այդ որոշումը վիրաւորական, յայտնեց ընկերութեան վարչութեան, որ նա այլ ևս չէ ցանկանում մնալ վարչութեան փոխնախագահի պաշտօնի մէջ։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, թէ մարտի 13-ին, պետական խորհրդի միացեալ դէպարտամէնտների ժողովում անդրկովկասեան գիւղական պահակախմբերը ճանաչված են անհրաժեշտ իրանց այժմեան կազմով։ Նրանց պահպանութեան համար անհրաժեշտ գումարները պէտք է ծախսվեն գիւղական համայնական բիւջէներից, իսկ պետական գանձարանը պէտք է օգնէ այդ դէպքում մի նպաստով, որի չափը դեռ ևս չէ որոշված։

—

Ստացանք պ. Գէորգ Յարութիւնեանից 2 ռուբլի առաջիկայ զատական ծներին չքաւորներին բաժանելու համար։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ հինգշաբթի, մարտի 20-ին, երեկոյեան ժամի 8-ին, զինուորական խորհրդի դահլիճում կովկասեան շտաբի շինութեան մէջ տեղի կունենայ Կայսերական Աշխարհագրական ընկերութեան կովկասեան բաժանմունքի ընդհանուր ժողովը, որի ժամանակ բաժանմունքի իսկական անդամ Կ. Ֆ. Գան մի զեկուցում կը կարդայ իր ճանապարհորդութեան մասին դէպի Դաղստանի ամենաբարձր տեղերը։ Ժողովին կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք. մուտքը ձրի է։

—

Թիֆլիսի «Արտիստական թատրոնում առաջիկայ գարնանը ներկայացումներ կը տայ Մոսկվայի Կայսերական Փոքր թատրոնի դրամատիկական խումբը Գրավդինի ղեկավարութեամբ։ Խմբի մէջ կը լինեն, ի միջի այլոց, դերասանուհի Լեշկովսկայան և դերասան Սուխաչով։ բացի սրանից նոյն ժամանակ Թիֆլիս կայցելէ նաև Վիէննայի օպէրէտային խումբը Շուլցի ղեկավարութեամբ։

—

Օրէնսդրական կարգով որոշված է՝ կօզակների գիւղերին հողեր տալու ժամանակ՝ յատկացնել նրանց եկեղեցիներին ևս 300-ական դեսեատին հող։ Եթէ մի գիւղում լինեն մի քանի եկեղեցիներ՝ իւրաքանչիւրը նրանցից պէտք է ստանայ այդ քանակութիւնից ոչ պակաս հող։ Նոյն չափով հողեր տրվում են նաև կօզակների գիւղերում գտնվող օտար եկեղեցիներին։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մարտի 1-ին, երեկոյեան, տեղիս կրուժօկի դահլիճում, գիմնազիայի ուսուցիչ պ. Դերժավին կարդաց մի հրապարակական դասախօսութիւն ռուս մատենագիր Տուրգենեվի մասին։ Դասախօսութեան դրամական արդիւնքը յատկացրված էր գիմնազիայի աղքատ աշակերտներին օգնելու համար գոյութիւն ունեցող ընկերութեանը։ Դահլիճը գրեթէ լիքն էր ունկնդիրներով։ Դասախօսը կարդում էր սահուն, պարզ ու հասկանալի կերպով։ Նիւթը մշակել էր բարեխղճութեամբ ու չատ յարմար այս ժամանակին, քանի որ օրերումս տօնվում էր հանգուցեալ Ազատարար Ալէքսանդր II-ի գիւղացիներին ստրկութիւնից ազատելու յիշատակը ու քանի որ, ինչպէս պ. դասախօսը շեշտեց, Տուրգենեվ իր գրչով, իր երկերով այնքան նպաստել է այդ մեծ խնդրի լուծմանը։ Դասախօսը վարձատրվեց բուռն ծափահարութիւններով ունկնդիրների կողմից»։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Դերասան պ. Գալֆայեանը մարտի 6-ին տեղիս կլուբի դահլիճում, տեղական սիրողների մասնակցութեամբ, ներկայացրեց «Օթելլո»։ Դահլիճը կիսով չափ միայն լիքն էր. պ. Գալֆայեանի խաղը ժողովրդի վրա լաւ տպաւորութիւն թողեց և վարձատրվեց ծափահարութիւններով»։

—

ԳՕՐՈՒՑ մեզ գրում են. «Մեծ պասը անցնելու վրա է, իսկ Տինխիսի գիւղի 20 ծուխ հայերը մնացել են առանց հոգևոր մխիթարութեան։ Ամբողջ մեծ պասին նրանք ոչ ժամ են տեսել, ոչ պատարագ և, ինչպէս երևում է, ճաշակվելու էլ չը պիտի արժանանան, որովհետև իրանց 18 տարվայ ծխատէր քահանայից հոգևոր իշխանութիւնը խլեց այս գիւղը և յանձնեց մի նշանակովի քահանային, որին գիւղացիք չեն ընդունում։ Հարկաւոր ժամանակ նրանք դիմում են կրկին իրանց հին քահանային, որ, յարգելով հոգևոր իշխանութեան հրամանը, չէ մօտենում գիւղին։ Անցեալ օրը մի հոգեվարք հիւանդին այս ցրտերով, գիշերը ժամի 10-ին, բերել էին հին քահանայի մօտ ճաշակելու, նա էլ չէր ուզում ճաշակել։ Այս էլ պէտք է աւելացնենք, որ վերոյիշեալ գիւղացիք համախոսական են կազմել և ներկայացրել տեղիս հոգևոր կառավարութեանը, թէ նշանակովի քահանային մենք չենք ընդունում և հոգևոր կառավարութիւնը, փոխանակ գիւղացիների խնդիրքը յարգելու և համախոսականը ուղարկելու կօնսիստորիային, 12 օր պահելուց յետոյ վերադարձրեց համախոսականը գիւղացիներին։ Սրանք այսօր անձամբ գնացին Թիֆլիս՝ կօնսիստորիային դիմելու»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Ամսիս 2-ին, կիրակի գիշերը, արտիստ Արաքսեան Բաթումի հռչակաւոր երկաթեայ թատրոնում տուեց մի ներկայացում տեղական սիրողների մասնակցութեամբ։ Թատրոնը լի էր հասարակութեամբ։ Խաղը անցաւ շատ աջող. լաւ խաղացին արտիստ Արաքսեան, տեղական սիրողներից՝ Հայկ Սողոմոնեան։ Տոմսակները գրեթէ բոլորը վաճառված էին։ Շատ ուրախալի է, որ Բաթումի հայ հասարակութիւնը իմացաւ արժանապէս գնահատել պ. Արաքսեանին այն սիրայօժար մասնակցութեան համար, որ նա ձրիապէս ունեցաւ հայկական երեկոյթի ժամանակ։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Տեղիս հայոց ուսումնարանի ուսուցչուհի օր. Ե. Դօմբիլեանի նախաձեռնութեամբ մի խումբ սիմֆերօպօլցի հայ օրիորդներ դիմել էին ուր հարկն է, որ թոյլ տրվի հայոց ուսումնարանին կից կիրակնօրեայ դպրոց բանալ՝ հասակաւոր հայ օրիորդների համար։ Այժմ թոյլտուութիւնը ստացված է և ներկայ մարտի 2-ից դասախօսութիւններն արդէն սկսվեցին հետևեալ դասատուների ղեկավարութեամբ. կրօնից՝ Ղ. քահանայ Յովսէփեան, հայերէնից՝ պ.պ. Գ. Դոդոխեան և Ս. Տէր-Կարապետեան, ռուսերէնից՝ օր.օր. Վարդուհի Բահաթրեան, Ս. Կուսիկեան և Վ. Տէր-Յովհաննիսեան, թուաբանութիւնից՝ օր.օր. Ե. Դօմբիլեան և Մ. Կարա-Մուրզա։ Անկարելի է չուրախանալ այսպիսի մի ձեռնարկութեան գլուխ գալու համար։ Ամբողջ սրտով կատարեալ աջողութիւն ենք ցանկանում մեր ինտելիգենտ օրիորդներին, որոնք, ի հարկէ, ջանք չեն խնայի աւելի ևս զարգացնելու և ընդարձակելու իրանց գործը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վերջին ժամանակներս նեստորականների մէջ դէպի ուղղափառ եկեղեցուն դիմելու ձգտման հետ միասին նկատվում է այժմ նրանց մէջ և ազգային-հայրենասիրական ոգի, մանաւանդ Զուլամէրիկի շրջանում, նրանց ազգային կեանքի գլխաւոր կենտրոնում։ Զուլամէրիկը Վանի վիլայէթի լեռնային շրջանն է, մէկ օրվայ հեռաւորութեամբ պարսկական սահմանից։ Նրա ազգաբնակութիւնը բացառապէս բաղկացած է նեստորական սիրիացիներից, եթէ հաշուի չառնենք փոքրաթիւ հայերին։ Նեստորականների կրօնական-քաղաքական պետ է պատրիարք Մար-Շիմօնը, որի աթոռանիստն է Կոչանիսը, Զուլամէրիկի ամենախոշոր գիւղերից մէկը։ Մար-Շիմօնը քաջ և առոյգ ծերունի է, և անգին ժողովրդականութիւն ու հեղինակութիւն է վայելում ժողովրդի մէջ։ Նա իր ժողովրդի գործերը կառավարում է մելիքների և գիւղական տանուտէրների օգնութեամբ, որոնք մի և նոյն ժամանակ ազգաբնակութեան պատերազմական ոյժերի առաջնորդներն են։ Ամբողջ ժողովուրդը այդ շրջանում զինաւորված է Մարտինի հրացաններով։ Պատերազմի դէպքում Մար-Շիմօնը կարող է ասպարէզ բերել Զուլամէրիկից և հարևան շրջաններից պատերազմին ընդունակ 30—40,000 սիրիացիներ, որոնք, ամբանալով իրանց հայրենիքի անմատչելի լեռներում, կարող են յաջող դիմադրութիւն ցոյց տալ թշնամուն։ Եւ յիրաւի, Զուլամերիկը անցեալում յաճախ ենթարկվել է կանոնաւոր պաշարման թիւրքերի և քիւրդերի կողմից, բայց ամեն անգամ լեռների այդ գոռոզ բնակիչները ընդ առաջ էին գնում թշնամուն զէնքը ձեռքին և յաջող արիւնահեղ կռիւներից յետոյ յետ էին մղում նրանց և, վերջապէս արտաքսում էին նրանց իրանց հայրենիքի սահմաններից։ Այդ պատճառով Զուլամէրիկը իր բարձր լեռներով, անանցանելի ծերպերով, քաջ և պատերազմիկ ազգաբնակութեամբ թիւրքերի աչքում ներկայանում էր որպէս ամենավտանգաւոր անկիւն ամբողջ Ասիական Թիւրքիայում, և նա շատ անգամ միջոցներ էր ձեռք առնում նուաճելու և քարուքանդ անելու ազատ լեռնականների այդ բունը, բայց միշտ անաջող։ Պատերազմաէր քիւրդերին զսպելու համար, որոնց ծառայութիւնները այնպէս յաճախ դիմում է Թիւրքաց կառավարութիւնը քրիստոնեաներին ճնշելու համար Հայաստանում, նեստորական սիրիացիները դիմում են ամենախիստ միջոցներին։ Օրինակ, նորերս չաշէրանեան ցեղի քիւրդերը մեծ թիւով յարձակվեցին գիշեր ժամանակ սիրիական մի գիւղի վրա Զուլամէրիկում և կողոպտեցին այնտեղ մի քանի տներ։ Դրանից մի քանի օր յետոյ, զայրացած սիրիացիները, իրանց մէլիքի առաջնորդութեամբ, յարձակվեցին հարևան երկու քիւրդ գիւղերի վրա, սպանեցին 25 քիւրդերի, կատարելապէս աւերեցին այդ գիւղերը և հարուստ աւարով վերադարձան իրանց տեղը։ Վերջին ժամանակներս սկսեցին աւելի ևս յաճախ կրկնվել այդպիսի արիւնահեղ ընդհարումներ սիրիացիների և շրջակայ քիւրդ ցեղերի միջև։ Այդ ընդհարումների և կռիւների մէջ իր քաջութեամբ և անողորմ խստասրտութեամբ դէպի քիւրդերը հռչակվեց սիրիացի Սուրօն, որը սարսափ է տարածել շրջակայ ցեղերի վրա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 մարտի

ՑԱՐԻՑԻՆ։ Գնացին առաջին շոգենաւերը Աստրախան։

ԱԹԷՆՔ։ Թագաւորը դիմեց դանիական թագաւորին հեռագրով, որ, դժբաղդաբար, ինքն չէ կարող մասնակցել ուսախմբութիւններին, որոնք տեղի կունենան Կօպէնհագէնում Խրիստիան թագաւորի ծննդեան 85-ամեակի առիթով։

ՄԱՆԻԼԻԱ։ Ամէրիկական հրացանաձիգների երկու վաշտ յարձակվեցին 200 ապստամբների վրա և ջարդ տուեցին։ Հրացանաձիգները կորցրին 3 սպանվածներ և 11 վիրաւորվածներ, իսկ ապստամբները 45 սպանվածներ։

ՄՕՆՏԵՎԻԴԷՕ։ Յեղափոխական պարագլուխների ժողովում խաղաղութեան դաշնագիրն ընդունվեց։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրուհին կառքով վերադարձաւ Բերլին, երբ կանչված լէյբ-բժիշկները Գրիւնէվալդ ամրոցում նրա վէրքը կապեցին։ Կայսրուհու առողջական դրութիւնը բաւական լաւ է։

ԲԵՐԼԻՆ։ «Reichs Anzeiger» լրագրում տպված է հետևեալ բիւլլետէնը. «Բէնտգէնեան ճառագայթներով հետազօտելու ժամանակ երևաց, որ կոտրվել է կայսրուհու չառաւիղ ոսկրի ստորին ծայրը։ Հարկաւոր չեղաւ վէրքը նորից կապելու։ Առողջական ընդհանուր դրութիւնը բաւարար է։

ՍՕՖԻԱ։ Նոր մինիստրութեան կազմակերպութիւնը յանձնված է Գէչէվին, որը այսօր կը ներկայացնէ մինիստրութեան անդամների ցուցակը։

16 մարտի

ԲԵՐԼԻՆ։ «Berliner Tageblatt»-ի համեմատ, զինուորական մինիստր Գոսլէրի հրաժարականը մերձակայ ապագայի հարց է միայն։ Նրան կը փոխարինէ Հօլցը։

ՄՕՍԿՎԱ. Անտրբարէնեօրների և արտիստների ժողովը վճռեց իւրաքանչիւր տարի մի մի ներկայացում տալ ի նպաստ զառամեալ արտիստների ապաստարանի և արտիստների երեխաներին դաստիարակելու համար։

ԲԵՐԼԻՆ։ «Norddeutsche Allgemeine Zeitung» հաղորդում է, որ միջազգային երկրաչափական ընկերակցութեան հիման վրա, կոնֆէրէնցիան կը կայանայ, գերմանական կառավարութեան հրաւէրով, նոր տօմարով յուլիսի 11-ից մինչև 15-ը Ստրասբուրգում։ Պրօգրամը հօղարկվի շուտով։

ՍՕՖԻԱ։ Ազգային ժողովի նստաշրջանը երկարացրված է մինչև մարտի 18-ը։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ։ Ստորտինգ միաձայն հաստատեց մաքսահարկի բարձրացումը ձէթին կբրկնակօչիկների վրա 80 օրէից մինչև մէկ կօն։

17 մարտի

ՍՕՖԻԱ։ Երբ Գէչովի բանակցութիւնները իշխանի հետ՝ մինիստրութեան կազմակերպութեան մասին՝ չը բերեցին հետևանքների, իշխանը հրաւիրեց կրկին Դանէվին։ Այսօր խօսում են հաւաքական կոմբինացիաների մասին։

ՄՕՍԿՎԱ։ Ռուսաց ագրօնոմների ընկերութիւնը միջնորդում է Ռուսաստանում կարակուլեան ոչխարների կայարան շինելու մասին։

—Հանգուցեալ տոհմական պատուաւոր քաղաքացի Նէօկլադնօվ 250,000 ռուբլի թողեց եաուզեան հիւանդանոցին վիրաբուժական շինութեան և ամբուլատորիայի համար, իսկ հիւանդանոցին կից բարեգործական ընկերութեան ապաստարանի համար 100,000 ռուբլի։

Կ. ՊՕԼԻՍ։ Ռուսաց դեսպան Զինովիէվ երէկ ընդունվեց սուլթանից։ Սուլթանը յայտնեց Զինովիէվին, որ բէֆօրմների ընդունված ծրագիրը գործադրվում է և մինչև վերջը կը հասցնվի։

ԿԵՕԼՆ։ Այստեղ մեծ աջողութեամբ կօնցերտներ է տալիս յայտնի ջութակահար Աուէր։

ՍՕՖԻԱ։ Մինիստրութիւն կազմելու համար Գէչովի արած ջանքերը մինչև այժմ անաջողութեան մատնվեցին։ Հաստատում են, որ հնարաւոր է երևում կազմակերպել հաւաքական գործունեայ մինիստրութիւն։ Լուր է պատում, որ մինիստրութեան անդամների ցուցակում կայ Սավով, որ զինուոր է համարվում Ցանկովականներին. Պապրիկով կը լինի գլխաւոր շտաբի հրամանատար։

ՄԷԼԻԼԻԱ։ Ամբողջ շրջանը Ֆէցի և Աֆրիկայի սահմանի միջև բռնկված է ապստամբութեամբ։ Ծովափնեայ շրջանների կաբիլեան գլխաւոր ցեղերի մեծ մասը հակումն է ցոյց տալիս դէպի թեկնածուն։ Խորհրդակցում էին վճռելու գործունէութեան եղանակին վերաբերեալ հարցը։ Վերջին տեղեկութիւնների համեմատ, սուլթանի հօրեղբայր Խամզան շրջապատված է թեկնածուի կողմնակիցներով։

ՄԱՆԻԼԻԱ։ Ամէրիկական զօրքերի հետ ուղեցած վերջին ընդհարման ժամանակ ապստամբների կողմից սպանվեց գեներալ Սան-Միգուէլ։

ՊԱՐԻԶ։ Սենատը պահպանեց պատգամաւորների ժողովի կողմից հաստատված մաքսահարկը նաւթի վրա։

Կ. ՊՕԼԻՍ։ Հիւպատոսական զեկուցումները Մակեդոնիայից վկայում են, որ նկատելի կերպով տարածվում է հանդատութիւնը տեղական ազգաբնակութեան մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մարթու, վներական և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ՌԷՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։

Ա. Գ. ՂԱՐԱԳԵՇԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄՈՒԼՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մարթու հ. (էլեկտրաբուժ.)։

Ն. Ս. ԼԻՒՐԻՑԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժ) ներքին և վներական հ.

ԿԻՆ-ՌԱՅԻՇԿ ԵՂԵՐԻՒՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Դ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախարհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. ԱՌՎԱՆԻՑԿԻ—ատամը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. գիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝

բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

„ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ“

գրախանութը փոխադրվեց Լալայեվի տունը։ Դվօրցօվայա փողոցի վրա № 9։ 2—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԻՎՀՈՆՆԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Բանաստեղծութիւնների,

մեծ դիրքով, մօտ 350 էջ։

Շքեղ թղթի վրա, հեղինակի պատկերով և փառակազմ 10 ռուբլի, լաւ թղթի վրա 3 ր.։ Բաժանորդագրութիւնը կը փակվի յունիսին և գրքերը կը տալվեն բաժանորդների թւով։

Թիֆլիսում դիմել—իշխ. Մարիամ Թումանեանին (Барятинская, 8) և Փ. Վարդազարեանին (Вольяминовская, 24). Բագու.—ինժէներ Մխիթար Տէր-Անդրիասեանին (Т-во Андраникъ) և Արամ Նազարէթեանին (к-ра Шагиданова)։ 6—10

50,000

ծառեր փշատերև անտառի, եղևնի և շոճի, վեց վերշոկ և աւելի, արվում են կորելու իշխանուհի Մարիա Իոսիֆովնա Ջավախովայի կալուածքում։ Կալուածքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն և հինգ վերստ հեռաւորութեան վրա։ Բացի սրանից կալուածքում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, սաճառի և կեչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել իշխանուհի Ջավախովային—Сел. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисск. губ. և Карсъ, князю Джавахову. 9—20

ՀԱՐԱՒԱՏՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՏՈՒՆ

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ՉԻՑԹՈՒՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՇԻՐՈՒՄ

(Հիմնված 25 տարուց ի վեր)

Հաղորդում է մանրամասն տեղեկութիւններ Պարսից ծոցի առեւտուրի մասին, ունի ներկայացուցիչներ հարաւային Պարսկաստանի նշանաւոր կենտրոններում, ընդունում է յանձնարարութիւններ, գնում եւ վաճառում է ապրանքներ, փոխադրու է Եւրոպայից Պարսկաստան եւ Պարսկաստանից Եւրոպա, դիւրամատչելի պայմաններով.—Հասցէն. Zeytoon B. G. Buchier Persian-Bulf. 78—100

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մարթու և վներական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիկո-միկրոսկոպիական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի և արեան անալիզներ։

Առաւօտեան 11—1 ժ.

Երեկոյեան 4—6 ժ.

Բեբուտովսկայա փողոց № 41. տուն Արարատեանի։ Вебутовская ул. № 41. Домъ Араратова. 73—150

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

„ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ“

Ժողովածու հանդուցեալ բժիշկ

ԳԷՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ

Հրատարակութեամբ օր. ՄԱՆԷ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ

Խմբագրութեամբ «Ազգագրական Հանդիսի»։

Շքեղ տպագրութեամբ, 550 մեծադիր երեսներով։

Գինն է առանց ճանապարհածախսի 1 ր. 50 կ.

Դիմել Եր. Լալայեանցին, Тифлисъ, Саперная № 5.

Հանդուցեալ բժիշկ Ախվերդեանի դուստր՝ օր. Մանէ Ախվերդեան «Հայ Աշուղների» հրատարակութիւնն ամբողջապէս նուիրել է «Ազգագրական Հանդիսի» խմբագրութեանը, իսկ բժշկականութեան վերաբերեալ իր հոր հարուստ մատենադարանը նուիրել է Կովկասեան Բժշկական ընկերութեանը։ 1—4

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զուսպնալով միջոց վճարելու որդուս ուսման վարձը, որ սովորում է Թիֆլիսի երրորդ գիմնազիայի I դասարանում, դիմում եմ բարեգործ անձերի օգնութեան։ Որդուս համար մինչև այս մարտ ամսի 20-ը հարկաւոր է վճարել գիմնազիայի վարչութեան 20 ռուբլի, հակառակ դէպքում վարչութիւնը կարձակէ նրան ուսումնարանից։ Որդիս գիմնազիայի ընդունակ և լաւ սովորող աշակերտներից է։ Խնդրում եմ վճարել 20 ռուբլի III գիմնազիայի վարչութեան առաջին դասարանի աշակերտ Թ. Մ-ի համար։ 1—3

Լոյս տեսաւ

„ԲԱԶՄԱՎԷՊ“ ԱՄՍԱԳՐԻ

Մարտ ամսի համարը

Բովանդակութիւն.—Երեմ. հ. Ս. «Կրրթական օրօր մը»։ Սահակեան հ. Կ.—«Եկեղեցական» (բանաստեղծ.)։ «Մրցանակ առաքինութեանց». Թարգմ. Նուրիխան հ. Մ. Վ.։ Պոտուրեան հ. Մ.—«Զեռնադրութիւն Հայ կաթողիկոսին»։ Ա. Նալբանդ.—«Օձ և ձուկ»—Ամպեր (առակ)։ ԳՈՌՆԵՑԻ.—«Ենիկոմիդէս» (վերջ), Թարգմ. հ. Գ. Վ. Ճէլալեան։ Ղազիկեան հ. Ա. «Զեռ կրնար գոհ ընել» (բանաստ.)։ Ղազիկեան հ. Ա.—«Երիցեան և Բագրատունի»։ Վարդապատ.—«Մշուշը» (բանաստ.)։ Սահակեան հ. Կ. և Անդրիկեան հ. Ն.—«Բանաստեղծական նորութիւններ»։ Ղազիկեան հ. Ա.—Ապերախտ է հայը (բանաստ.)։ Երեմ. հ. Ս.—«Մնաս բարով օճախ (վէպ)։ Տիրացուեան հ. Ն.—«Օդային ճանապարհորդութեան խնդիրը»։ Գազէզեան հ. Ա. վ.—«Էլլիճա»։ Երեմ. հ. Ս.—«Հանդէս հանդիսից»։ Տիրացուեան հ. Ն.—«Նահապետի յիշատակին նուիրված գորգին առթիւ»։

Հասցէ. Rédaction de la Revue «Pazmaveb», St. Lazare, Venise.

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան չինութեան մէջ Հաջի-Իզմայիլօղլու այգիներից ԾԱԽՎՈՒՄ ԵՆ պտղատու ծառեր—խնձորենիներ, տանձենիներ, դեղձի ծառեր և այլն, երկու տարեկան և երեք տարեկան։ 1—3

Լոյս տեսաւ

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ

Ստէրէօսկոպիական պատկերների ժողովածուի Ա. մասը, 50 պատկերներից բաղկացած

Լուսագրիչ Ա. ՎՐՈՒՐ

Պատրաստված է երկու տեսակ. 1) ամենաընտիր պրոտալբինի թղթի վրա և գեղեցիկ տուփի մէջ ամփոփված գինը 15 ռուբլի. 2) Ալբումինի թղթի վրա, առանց տուփի, գինը 12 ռուբլի։

Գնել կամ տեսնել ցանկացողները թող դիմեն՝ Թիֆլիսում «Գուտէնբերգ» գրավաճառանոցը. Բագուում Ս. Ցարութիւնեանի գրավաճառանոցը։ Այս հասցէին պէտք է գրեն նաև պատկերների նմուշներըստանալ ցանկացողները՝ Ա. Վրոյրին յանձնելի, ներփակելով 3 հատ 7 կ. մարկա։ Արտասահմանից ևս այս հասցէին դիմել՝ առանց մարկաների։

(Ե. Չ.) 4—5

ԲԺԻՇԿ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

(Վելիամինովսկայա փող. № 4)

Ներվային և ներքին հիւանդութիւններ։ Էլէքտրոստէրապիա։ Հիւանդների ընդունելութիւնը կատարվում է ամեն օր, բացի կիրակի օրերից, ցերեկվայ ժամի 1—2-ը և երեկոյեան ժամի 6—7։ (Ե. Չ.) 6—6

ՇՂԹԱՅ

ՆԱԻԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ընկերութեան պ.պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, որը տեղի է ունենալու կիրակի օր սոյն մարտի 23-ին, առաւեւտեան ժամի 10-ին, քաղաքային տան դահլիճում։

Զբաղմանառարկաներն են.

1) Վերաքննիչ յանձնաժողովի զեկուցումը, ընկերութեան գոյքի և նախորդ (առաջին) տարվայ հաշիւի վերաբերեալ։

2) Ընկերութեան հաստատուն հաշիւը 1902 թ. մարտ 1-ից մինչև 31-ն յունվար 1903 թիւ։

3) Վարչութեան զեկուցումը ընթացիկ—1903 տարվայ ընկերութեան գործունէութեան վերաբերեալ և

4) Վարչութեան մէկ անդամի ընտրութիւնը ի տեղի հրաժարված պ. Մ. Ա. Օգանեսովի։

Եթէ ժողովը չը կայանայ բաժնետէրերի սահմանեալ քանակութիւնը չը գալու պատճառով, համաձայն ընկերութեան պայմանագրի 29 §, երկրորդ ժողովը, որը կայացած կը համարվի, անկախ բաժնետէրերի թիւից, նշանակվում է նոյն տեղը սոյն ամսի 30-ին առաւօտեան 10 ժամին։ (11, 16, 23,) 2—3

ԵՂԲԱՐՔ ԾՈՎԵԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Առևտրական տան գործերի Վարչութեան Թիֆլիսի գրասենեակը սոյն մարտի 15-ից կը տեղափոխվի Բէբուտովսկայա փողոց, № 10, գնդապետ Ստեփանեանի տունը։ Մուտքը Ուսպենսկի առաջին տուպիկից։ (12, 16 մ.) 2—2

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ

(INJECTION AU MATICO)

Գրիպ և ընկ դեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ չահագործված են պերուանեան Մատիկո բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Ճարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։

Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։ (2, 17) 6—24

ԵՂԲ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ

Հանդերձախանութում

ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Կանանց վերնազգեստներ, այն է գէյշաներ, սակեր, կիսասակեր, ժակէտներ և պելերինաներ, որոնք կարված են բերլինեան ամենավերջին տարազով և ֆէդկաշէնտական հաշակով։ Ստացված են նոյնպէս կանանց շրջազգեստներ—մետաքսից և մուարից։

Նոյն տեղում ստացված է մեծ քանակութեամբ աղամարդկանց և երեխաների պատրաստի հագուստներ։ Ընդունում ենք նաև մեր սեփական կտորներից ամեն տեսակ պատուէրներ, որոնք ստացված են արտասահմանի և Ռուսաստանի ամենայայտնի գործարաններից։ Գների կողմից չունի ոչ ոք մրցող։

Գօլովինսկի պրոսպ. I-ին գիմնազիայի հանդէպ։ 6—10

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՆԱԳԼԷԹԳԱ“

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

Հիմնական գրամագլուխը	1,650,000	ռուբլի
Պահեստի դրամագլուխը	2,664,808	»

Ի. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ Եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Ցեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ ամբ եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր չեներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար չատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

Պ. ՆԱԻԱԳՆԱՑ ԻԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրեան նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բագուում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համակայութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ առօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։

բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։

գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։

դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ զբաղվող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի ուրիշ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նագեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի, պրոսպէկտի վրա, № 10-բորգ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագուում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվօրցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տանը։ Տելեֆոն № 108 (Ե. ա. կ.) 49—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 17 Марта 1903 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.